«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարանի գիտության գծով պրոռեկտոր,
տ.գ.դ., պրոֆեսոր
Ա.Խ.Գրիգորյան
«20» 06 2022թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Լևոն Աշոտի Հովնանյանի «ՀՀ ներդրումային շուկայի զարգացման արդի հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսությունը քննարկվել է «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի» «Հասարակագիտական գիտությունների» ամբիոնի 16.06.2022թ. նիստում (արձանագրություն թիվ 11):

Մասնակցում էին **Բաղդասարյան Ն.**՝ քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ, **Աղայան Մ.**՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, **Գրիգորյան Գ.**՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, **Հարությունյան Լ.**՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, **Ադոնց Ն.**՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, **Մինասյան Վ.**՝ փիլիսոփայության թեկնածու, դոցենտ, **Կարապետյան Ա.**՝ պատմական գիտությունների թեկնածու, ասիստենտ, **Ղարիբյան Ա.**՝ փիլիսոփայության թեկնածու, դոցենտ, դասախոսներ՝ **Կարապետյան Ա., Բաղդասարյան Ա., Թադևոսյան Ա., Մարգարյան Ա., Ալավերդյան Ն., Ստեփանյան Մ., Մանթաշյան Ս.**՝ ասիստենտ:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ներդրումների խթանման համար կարևոր նախապայման է զարգացած ներդրումային շուկայի առկայությունը, բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումը և ներդրողների շահերի պաշտպանության պատշաճ մակարդակի ապահովումը, ինչը նպաստում է օտարերկրյա և տեղական ներդրողների տեսանկյունից տնտեսության գրավչության բարձրացմանը:

Միևնույն ժամանակ, հատկապես անցումային տնտեսություն ունեցող Հայաստանի Հանրապետության համար, ներդրումային արդյունավետ քաղաքականության մշակումը և դրա հետևողական կիրառումը չի կարող իրացվել մեկուսացված ներկա գլոբալ քաղաքական և տնտեսական գործընթացներից: Ուստի ներդրումային քաղաքականության համապատասխանեցումը համաշխարհային շուկայի անընդհատ փոփոխվող պահանջներին՝ աներկբա է: Նշվածը չափազանց կարևոր դերակատարություն ունի երկրի միջազգային մրցունակության բարձրացման, ինչպես նաև տնտեսությունն արդիականացնելու դիտանկյունից: Մասնավորապես, ԵԱՏՄ ձևավորման համատեքստում, անդամ երկրների համար նոր ներդրումային քաղաքականության ձևավորումը օրակարգային խնդիր է, որտեղ «գիտություն – ձեռնարկատիրական գործունեություն - պետություն» եռանկյունու արդյունավետ փոխազդեցությունը, համագործակցող երկրների գիտատեխնիկական, տնտեսական, ֆինանսական և կազմակերպչական հնարավորությունների ինտեգրումը՝ այդ կառույցի շրջանակում համագործակցությունը բարձրացնում է նոր մակարդակի վրա:

Այնուհանդերձ, ՀՀ տարածաշրջանային համագործակցության առաջնահերթությունը պետք է լինի ազգային ներդրումային շուկայի զարգացումը, ներդրումների բազմակողմանի խթանումը, հետևաբար նաև ներդրումային երաշխիքների սահմանումն ու ներդրումների պաշտպանվածության մեխանիզմների ամրագրումը: ՀՀ ներքին շուկայում ներդրումների խթանման, դրանց արդյունավետության բարձրացման, ներդրումային նախաձեռնությունների խրախուսման հիմնախնդիրները իրենց արդիականությունը

պահպանում են միշտ, իսկ ներկա իրավիճակում, երբ մեր երկիրը բախվել է անվտանգային հիմնախնդրին, տնտեսական անվտանգության ամրապնդումը անչափ կարևոր նշանակություն ունի: Վերոգրյալ խնդիրների լուծումը պահանջում է ներդրումային շուկայի արդյունավետ գործունեությանը խոչընդոտող գործոնների վերացում և ոլորտի զարգացման նոր մոտեցումների մշակում, ինչով էլ պայմանավորված է սույն ատենախոսության թեմայի ***արդիականությունը:***

Հետազոտության նպատակը և հիմնական խնդիրները

Հետազոտության հիմնական նպատակը՝ Հայաստանի Հանրապետության ներդրումային շուկայի զարգացման հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծման ուղիների մշակումն է: Նշված նպատակի իրականացումը ենթադրում է որոշակի խնդիրների և դրանց լուծումների առաջադրում, մասնավորապես.

- դիտարկել ներդրումների տնտեսական բովանդակությունը և ներդրումային գործընթացի կառուցվածքային առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում,
- ուսումնասիրել ներդրումային շուկայի կառուցվածքը, կազմակերպչական առանձնահատկությունները և գործունեության մեխանիզմները,
- պարզաբանել պետական ներդրումային քաղաքականության դերը ներդրումային շուկայի ձևավորման և կարգավորման գործում,
- ուսումնասիրել ներդրումային շուկայի կարգավորման տարբեր երկրների փորձը և բացահայտել ներդրումային շուկայի կառուցվածքային առանձնահատկությունները ՀՀ-ում,
- վերլուծել ներդրումային հոսքերը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների շարժընթացը և դրանց փոխառնչությունները ՀՀ-ում,
- ուսումնասիրել Հայաստանի ներդրումային շուկայի զարգացմանը խոչընդոտող գործոնները և վերլուծել այդ ոլորտում առկա հիմնախնդիրները,

- բացահայտել ներդրումային շուկայի զարգացմանը միտված պետական ներդրումային քաղաքականության հիմնական ուղղությունները:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և չորս հավելվածից:

Ատենախոսության առաջին գլխում («Ներդրումային շուկայի էությունը և գործունեության առանձնահատկությունները») ներկայացվել է ներդրումային գործընթացի, ինչպես նաև ներդրումային շուկայի մեխանիզմի կառուցվածքի առանձնահատկությունները:

Աշխատանքի երկրորդ գլուխը («Ներդրումային շուկայի կարգավորման առանձնահատկություններն արտերկրում և ՀՀ-ում») նվիրված է ներդրումային շուկայի կարգավորման առանձնահատկությունների վերլուծությանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ներդրումային շուկայի կառուցվածքի վերլուծությանն ու առանձնահատկությունների բացահայտմանը:

Ատենախոսության երրորդ գլխում («Ներդրումային շուկայի զարգացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում») հեղինակը անդրադարձել է Հայաստանի ներդրումային շուկայի զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոններին և ՀՀ առկա հիմնախնդիրներին, ինչպես նաև ՀՀ ներդրումային շուկայի զարգացման համատեքստում փորձել ներկայացնել ներդրումային քաղաքականության բարելավման ուղիները:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը

Ատենախոսության գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, հանգում են հետևյալին.

- Հստակեցվել և համակարգված ներկայացվել են ՀՀ ներդրումային շուկայի զարգացմանը խոչընդոտող գործոնները, որոշակիացվել է ներդրումային արտոնությունների հասցեականությունը, ներդրումների արդյունավետությունը բարձրացնելու նկատառումներով՝ ներդրումային գործընթացի շրջանակում ներդրումային գործունեության մակարդակի և որակի կարևորագույն չափորոշիչները և դրանց առանձնահատկությունները:
- Ներդրումների արդյունավետությունը գնահատելու նպատակով կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծության հիման վրա պարզաբանվել է համախառն ներքին ներդրումների ազդեցությունը ՀՀ համախառն ներքին արդյունքի, ապրանքաշրջանառության և արտահանման վրա և բացահայտվել է, որ եթե ՀՆԱ-ՀՆՆ, առևտրաշրջանառություն - ՀՆՆ կապի դեպքում էլաստիկության գործակցի արժեքը կիրառելի է, ապա արտահանում - ՀՆՆ կապի դեպքում՝ կիրառելի է վերապահումով:
- Պարզաբանվել են պետական ներդրումային քաղաքականության հիմնական հատկանիշները, որոնք հանգում են հանրային շահին պետական ներդրումային քաղաքականության ուղղվածությանը, ներդրումային պայմանների և նախադրյալների համակարգի ձևավորմանը, պետության ներդրումային գործունեության հստակ դիրքորոշմանը, կանխատեսվող ներդրումային քաղաքականության և կապիտալ ներդրումների ոլորտային առաջնահերթությունների սահմանմանը:
- Փորձ է արվել ներկայացնել, թե որքանով է գրավիչ ՀՀ ներդրումային միջավայրը, և ըստ այդմ՝ համակարգվել են պետական ներդրումային քաղաքականության բարելավման հիմնական ուղղությունները, դրանց շրջանակում իրականացվելիք միջոցառումները՝ ներդրումների ներգրավման, սպասարկման և աջակցման ինստիտուցիոնալ մեխանիզմների կատարելագործման հենքի վրա:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Հեղինակը ներկայացնելով ՀՀ ներդրումային շուկայի զարգացման արդի հիմնա-խնդիրները, մասնակիորեն է անդրադարձել վերջինիս լուծման ուղիներին: Ավելին՝ կան առաջարկություններ, որոնք ՀՀ-ում արդեն իսկ առկա իրողություններ են: Մասնավորապես՝ ՆԱԿ-ի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկվում է վերջինիս կառավարումը իրականացնել վարչապետի կողմից գլխավորած խորհրդի կողմից, մինչդեռ նման որոշումը արդեն իսկ գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում (02 դեկտեմբեր 2021թ):
2. Ատենախոսության 26-րդ էջում հեղինակը գծանկարի ձևով պատկերել է ներդրումային գործընթացի կառուցվածքային մոդելը՝ այն ներկայացնելով որպես «հեղինակի կողմից տեսական հետազոտությունների հիման վրա» կազմված մոդել: Մինչդեռ տնտեսագիտական գրականության մեջ վերջինս բավականին շրջանառվող հայտնի մոդել է:
3. Անդրադառնալով ներդրումային դաշտի գրավչությանը՝ ատենախոսը ներկայացնում է թվով 19 փորձագետների շրջանում կատարված քանակական վերլուծությունը: Սակայն հետազոտության ընտրանքի ձևավորման մեթոդաբանությունը բացակայում է: Որակական վերլուծությունը՝ հարցազրույցների և ֆոկուս-խմբերի անցկացման միջոցով, շատ ավելի խորը և համակողմանի տեղեկատվություն կապահովեր հետազոտվող խնդիրների և պատճառահետևանքային կապերի մասով: Նման թերի հարցման մեթոդը դուրս է թողել այնպիսի լուրջ ու կարևոր ոլորտները, ինչպիսիք են SS ոլորտն ու զբոսաշրջությունը:
4. Ատենախոսության 87-րդ էջում հեղինակը, ներկայացնելով ՕՈՒՆ-երի շարժընթացը, ընդգծում է վերջին տարիներին նկատված նվազման միտումը: Սակայն հավաստի չի ներկայանում հեղինակի կողմից Ամուլսարի հանքի շահագործման հարկադիր դադարեցումը՝ որպես վերը նշվածի հիմնական պատճառ դիտարկելու դրույթը:

5. Ատենախոսության հատկապես առաջին գլուխը և երկրորդ գլխի առաջին ենթակետը ծանրաբեռնված են ներդրումների էությունը և կարգավորումը բնութագրող հայտնի մեկնություններով, մինչդեռ աշխատանքը կշահեր, եթե փոխարենը շրջանառության մեջ դրվեին հայ տնտեսագետների համեմատաբար ավելի մեծ թվով աշխատություններ՝ հաշվի առնելով, որ վերջին 30 տարիների ընթացքում, Հայաստանի ներդրումային դաշտի վերլուծությունը, հանրապետության տնտեսագետների ամենաարծարծվող թեմաներից է:
6. Շատ տնտեսագիտական հրապարակումներում հաճախ այս կամ այն հարցի վերաբերյալ կատարվում են չհամեմատվող համեմատություններ: Այս պարագայում խոսքը վերաբերում է ատենախոսի կողմից ներդրումային գործընթացներում զարգացած երկրների՝ պետության ստանձնած գործառույթների փորձի ներկայացմանը, որի արհեստական կիրառումը նոր շուկայական տնտեսությանն անցնող երկրների համար դժվար թե ցանկալի նպաստ կարող է բերել: Աշխատանքը ավելի կշահեր, եթե հեղինակը համեմատական զուգահեռներ տաներ տարածաշրջանային երկրների ներդրումային միջավայրերի միջև:

Լևոն Աշոտի Հովնանյանի ատենախոսությունն ունի որոշակի գիտագործնական նշանակություն, որում դրվել և փորձ է արվել լուծել հանրապետության համար որոշակի կարևորություն ունեցող խնդիրներ:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են 7 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Լևոն Աշոտի Հովնանյանի «Ներդրումային շուկայի զարգացման արդի հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն

արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀԱՊՀ «Հասարակական գիտությունների»
ամբիոնի վարիչ՝ քաղ.գիտ.թեկնածու, դոցենտ՝ **Ն.Ք.Բաղդասարյան**

ՀԱՊՀ «Հասարակական գիտությունների»
ամբիոնի «Ընդհանուր տնտեսագիտության»
սեկտորի վարիչ՝ տնտ.գիտ.թեկ., դոցենտ՝ **Մ.Կ.Աղայան**

Գրախոսողներ՝
տնտ.գիտ.թեկնածու, դոցենտ՝ **Ն.Պ.Ադոնց**
տնտ.գիտ.թեկնածու, դոցենտ՝ **Լ.Կ.Հարությունյան**

ՀԱՊՀ գիտական քարտուղար՝
տեխ.գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Ծ. Ս. Հովհաննիսյան**

20.06.2022